ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՌՀՀ ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուսումնառության, հնարավորությունների և ուսանողական կյանքի քո արագ ձեռնարկը

2026-2027

Ի՞նչ կգտնես ուղեցույցում

- ինչպե՞ս է կազմակերպվում ուսումնական գործընթացը և գնահատումը
- որտե՞ղ գտնել պրակտիկայի, ակադեմիական շարժունության և կարիերային առաջընթացի հնարավորություններ
- ո՞ւմ դիմել կարևոր հարցերի դեպքում
- ինչպե՞ս վստահորեն սկսել համալսարանական կյանքը

Սա պարզապես ուղեցույց չէ, այլ համալսարանական կյանքում կողմնորոշվելու հստակ ուղեցույց:

Ուսումնառություն
Հնարավորություններ
Կապեր
Ուսանողական կյանք

*ՌՀՀ Ուսանողի ուղեցույցը մշակվել է ՌՀՀ ուսանողների նախաձեռնությամբ, ՍՊՊՀ հետ համատեղ իրականացվող «Նախագծային գործունեության հիմունքներ» դասընթացի շրջանակում և ուսանողական նախագծերի մրցույթի արդյունքներով ճանաչվել է հաղթող:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Քո 1 շաբաթը ՌՀՀ-ում

Քո առաջին քայլերը՝ առանց ավելորդ ծանրաբեռնվածության:
Պահպանիր այս էջը որպես մեկնարկային ուղեցույց:

01 Ծանոթացիր ՌՀՀ կայքին

Պահպանիր rau.am-ը և քո Ինստիտուտի էջը: Այստեղ կարող ես գտնել դասացուցակը, ինչպես նաև տեղեկություններ կրթական ծրագրերի վերաբերյալ:

02 Պահպանիր անհրաժեշտ կոնտակտները

Գրառիր քո Ինստիտուտի, Ուսումնական գործընթացի կազմակերպման դեպարտամենտի և խմբի ավագի կոնտակտային տվյալները: Սա կօգնի ժամանակ խնայել ցանկացած հարցի դեպքում:

03 Ծանոթացիր հիմնական կանոններին

Սկզբում ծանոթացիր հաճախումների կարգին, գնահատման համակարգին և քո ուսումնական պլանին:
Սա վստահ մեկնարկի հիմքն է:

ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

- իմանալ դասացուցակը և անհրաժեշտ լսարանի համարը
- հասկանալ, թե որտեղ գտնել Համալսարանի նորությունները
- պահպանել վերջնաժամկետները և խուսափել անհարգելի բացակայություններից

Համալսարանում ավելի հեշտ է հարմարվել, երբ անհրաժեշտ տեղեկատվությունը և հստակ ուղեցույցը միշտ ձեռքի տակ են:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ինչպե՞ս է կազմակերպված ուսուցման գործընթացը

Դասացուցակի, կրեդիտների, կիսամյակի և դասերի ձևաչափերի մասին՝ պարզ և հստակ:

ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

https://rau.am/am/timetable

I	9:00–9:45 | 9:50–10:35
II	10:45–11:30 | 11:35–12:20
III	12:50–13:35 | 13:40–14:25
IV	14:35–15:20 | 15:25–16:10
V	16:20–17:05 | 17:10–17:55
VI	18:05–18:50 | 18:55–19:40
VII	19:50–20:35 | 20:40–21:25
VIII	21:35–22:20 | 22:25–23:10

Պահպանի՛ր դասացուցակը հեռախոսում. այն առաջին շաբաթների ընթացքում ամենաօգտակար էջերից մեկն է:

ԺԱՄԱՆԱԿ

Ակադեմիական ժամ

45 րոպե

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

1 պարապմունք = 2 ակադեմիական ժամ

90 րոպե

ECTS

Կրեդիտներ մեկ կիսամյակում

30

Ընդհանուր

Կրեդիտներ մեկ ուսումնական տարում

60

Ընդհանուր կրեդիտների քանակը բակալավրիատում՝ 240 կրեդիտ
Մագիստրատուրայում՝ 60 կրեդիտ (մեկամյա կրթական ծրագիր)
և 120 կրեդիտ (երկամյա կրթական ծրագիր)

Կիսամյակ

≈ 16 շաբաթ տեսական ուսուցում + ստուգարքային և քննական շրջան + արձակուրդներ:

Ուսումնական պլան

Սա քո ուսումնական ուղին է՝ դասընթացները, պրակտիկայի տեսակները և ատեստավորման ձևերը՝ ըստ հաջորդականության և ծանրաբեռնվածության:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Դասախոսությունները օգնում են ձեռք բերել տեսական գիտելիքներ, սեմինարները՝ քննարկել և ավելի խորությամբ հասկանալ նյութը, իսկ գործնական և լաբորատոր պարապմունքները՝ կիրառել ստացած գիտելիքները գործնականում:

Դասախոսություն
տեսություն

Սեմինար
քննարկում

Պրակտիկա
հմտություններ

Լաբ.
փորձարկում

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ, ՄՈԳ ԵՎ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐ

Ընթացիկ ստուգում → միջանկյալ ստուգում → ամփոփիչ ստուգում → վերջնական գնահատական

1. Ինչպե՞ս է ձևավորվում վերջնական գնահատականը

1. **Ընթացիկ ստուգում**
   Առաջադրանքների, թեստերի, հարցումների, ռեֆերատների և կիսամյակի ընթացքում կատարվող այլ աշխատանքների համար տրվող միավորներ:

2. **Միջանկյալ ստուգում**
   Ստուգողական աշխատանք, թեստ կամ մոդուլի շրջանակում գիտելիքների ստուգման այլ ձև:

3. **Ամփոփիչ ստուգում**
   Ստուգարք, ստուգարք գնահատականով կամ քննություն:

2. 100-միավորանոց գնահատման սանդղակ

A	88-100	գերազանց
B	76-87	շատ լավ
C	64-75	լավ
D	52-63	բավարար
E	40-51	անցողիկ
F	0-39	անբավարար

Ստուգարքային առարկաների համար

S	40-100 - ստուգված
U	0-39 - չստուգված

3. Ի՞նչ է ՄՈԳ-ը

ՄՈԳ - ակադեմիական առաջադիմության միջին ցուցանիշն է՝ հաշվարկված 4-միավորանոց սանդղակով:

ցույց է տալիս ուսանողի ընդհանուր առաջադիմության մակարդակը

կարող է հաշվի առնվել կրթաթոշակների, շարժունության ծրագրերի և ակադեմիական այլ հնարավորությունների դեպքում

Կա կիսամյակային և կումուլյատիվ ՄՈԳ

Խորհուրդ. հետևիր ոչ միայն առանձին գնահատականներին, այլև քո ընդհանուր ՄՈԳ-ին:

4. Հաճախումներ. կարևոր

Առանց հարգելի պատճառի դասերից բացակայելը ռիսկային է: Ավելին իմացիր Ուսանողական կարգապահական օրենսգրքում

60% և ավելի անհարգելի բացակայություններ մեկ առարկայի շրջանակում մեկ կիսամյակի ընթացքում կարող են հանգեցնել կարգապահական տույժերի կիրառման և ուսանողի հեռացման:

40% և ավելի անհարգելի բացակայություններ բոլոր առարկաների շրջանակում մեկ կիսամյակի ընթացքում նույնպես կարող են հանգեցնել կարգապահական տույժերի կիրառման և ուսանողի հեռացման:

Եթե դժվարություններ են առաջանում, ավելի լավ է նախապես կապ հաստատել ինստիտուտի կամ ամբիոնի հետ:

Հաճախումների մշտադիտարկումն իրականացվում է ամեն օր:

ԿԱՐԵՎՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Ակադեմիական պարտքի, տեղափոխության, վերականգնման և ակադեմիական արձակուրդի տրամադրման դեպքում անհրաժեշտ գործողությունների կարգ

1. Ակադեմիական պարտք

1. **Մի հետաձգիր.** ճշտիր, թե որ առարկաներից ունես պարտք
2. Իմացիր ակադեմիական պարտքի մարման ժամկետները Ինստիտուտում
3. Ժամկետները բաց թողնելու դեպքում կարող են առաջանալ լուրջ հետևանքներ, այդ թվում՝ հեռացում Համալսարանից

Խորհուրդ. որքան շուտ կապ հաստատես Ամբիոնի կամ Ինստիտուտի հետ, այնքան ավելի հեշտ կլինի լուծել հարցը

2. Տեղափոխություն

ՌՀՀ-ի ներսում
կրթական ծրագրի կամ ուսուցման ձևի փոփոխություն

Այլ բուհից՝
դիմումի և ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա

Վճարովի ուսուցումից՝ անվճար
ազատ տեղերի առկայության և սահմանված պահանջների բավարարման դեպքում

Կարևոր. կարող է անհրաժեշտ լինել առարկաների վերահաշվարկ և ակադեմիական տարբերության լրացում

3. Վերականգնում

- Վերականգնումը, որպես կանոն, հնարավոր է 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից սկսած
- Սեփական ցանկությամբ հեռացման դեպքում հնարավոր է վերականգնվել միայն սահմանային տեղերի առկայության դեպքում
- ՌՀՀ-ի նախաձեռնությամբ հեռացման դեպքում վերականգնումը, որպես կանոն, իրականացվում է վճարովի հիմունքներով

Առաջին քայլը. դիմում ներկայացնել ՌՀՀ Ռեկտորի անունով՝ Ինստիտուտի միջոցով:

4. Ակադեմիական արձակուրդ

Ե՞րբ է հնարավոր
բանակ զորակոչվելու, բժշկական ցուցում ունենալու և հղիության դեպքում

Որքա՞ն է տևում
մինչև 2 տարի

Ի՞նչ է անհրաժեշտ
դիմում և համապատասխան փաստաթղթեր

Արձակուրդի ավարտից հետո անհրաժեշտ է հրամանով ձևակերպել ուսումնառության շարունակությունը

Ո՞ւմ դիմել

Ինստիտուտ

Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին

5. Ուսման վարձավճար

Ուսումնական պլանը՝ ըստ ժամանակացույցի, վճարումը՝ նույնպես՝ ըստ պայմանագրի ժամանակացույցի

Ուսանողական հագեցած առօրյայում հեշտ է կարևոր բան բաց թողնել: Այդ պատճառով խորհուրդ ենք տալիս Ձեզ նախապես նշել ուսման վարձի վճարման ժամկետները օրացույցում և վճարումը չհետաձգել:

Ժամանակին վճարում կատարելը թույլ կտա հետագայում հանգիստ կենտրոնանալ դասախոսությունների, նախագծերի, քննությունների և ուսանողական կյանքի մյուս հաճելի կողմերի վրա:

Մի փոքր հիշեցում այսօր՝ ոչ մի ավելորդ անհանգստություն վաղը:

Ո՞ւմ դիմել՝
Հաշվապահություն
Հեռ.՝ (+374 12) 26-07-16
Սենյակ՝ 205, 206

6. Զորահավաքային և միգրացիոն հաշվառում

Փաստաթղթերի հետ կապված հարցերը նույնպես ուսանողական կյանքի մի մասն են: Եթե անհրաժեշտ է ստանալ տեղեկանք, ձևակերպել կացության կարգավիճակ կամ լուծել միգրացիոն և զինվորական հաշվառման հետ կապված այլ հարցեր, ապա դիմեք Իրավաբանական դեպարտամենտի Զորահավաքային և միգրացիոն հաշվառման բաժին:

Այստեղ Ձեզ կօգնեն կողմնորոշվել անհրաժեշտ փաստաթղթերի, դրանց ձևակերպման կարգի և ներկայացման ժամկետների վերաբերյալ:

Խորհուրդ. փաստաթղթերի ձևակերպումը մի՛ թողեք վերջին օրվան. նախապես ճշտեք, թե ինչ, երբ և որտեղ է անհրաժեշտ ներկայացնել:

Ո՞ւմ դիմել՝
Զորահավաքային և միգրացիոն հաշվառման բաժին
Էլ. փոստ՝ legal@rau.am
Սենյակ՝ 328

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հակիրճ՝ այն մասին, թե ինչպես օգտագործել պրակտիկան, միջազգային ծրագրերն ու նախագծերը մասնագիտական զարգացման համար

1. Պրակտիկա

1. Ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկա
2. Պրակտիկան կարող ես անցնել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունում, առանձին դեպքերում՝ ՌՀՀ-ում
3. Կարևոր է ժամանակին հանձնել պրակտիկայի օրագիրը, հաշվետվությունը և անցնել պաշտպանությունը
3. Պրակտիկա չանցնելը հավասարազոր է ակադեմիական պարտքի

Խորհուրդ. նախապես ճշտիր պահանջները պրակտիկայի համակարգողի հետ և հաշվետվությունը մի թող վերջին օրվան:

2. Կարիերայի կենտրոն

- Օգնություն ինքնակենսագրականի կազմման և կարիերայի պլանավորման հարցերում
- Տեղեկատվություն պրակտիկայի և թափուր աշխատատեղերի վերաբերյալ
- Խորհրդատվություն մասնագիտական զարգացման վերաբերյալ
- **Կոնտակտներ**
  career@rau.am
  (+374 12) 26-00-13,
  սենյակ՝ 262

Խորհուրդ. արդեն ուսման ընթացքում սկսիր ձեռք բերել մասնագիտական փորձ՝ մասնակցելով նախագծերի, կամավորական աշխատանքների և պրակտիկաների:

3. Ակադեմիական շարժունություն

- Այլ բուհում սովորելու կամ պրակտիկա անցնելու հնարավորություն
- Անհրաժեշտ են բարձր առաջադիմություն, մոտիվացիա և մրցութային ընտրություն
- Որպես կանոն, հասանելի է բակալավրիատի 4-րդ կիսամյակից և մագիստրատուրայի 2-րդ կիսամյակից
- Մասնակցությունից հետո ստացված արդյունքները կարող են հաշվանցվել ՌՀՀ-ում

Ո՞ւմ դիմել.
Միջազգային կապերի դեպարտամենտ-
international@rau.am, սենյակ՝ 215

Հանրակացարան
https://rau.am/content/accomodation

4. Գիտություն, նախագծեր և ակտիվություն

- Մասնակցիր գիտաժողովների, հետազոտությունների և ուսանողական նախաձեռնությունների
- Զարգացրու ճկուն հմտությունները՝ մասնակցելով ակումբների, միջոցառումների և թիմային նախագծերի
- Օգտագործիր Ուսանողական խորհուրդը, մենթորությունը և համալսարանական միջոցառումները՝ որպես զարգացման հնարավորություններ
- Որքան ակտիվ ներգրավվես, այնքան ավելի շատ օգտակար կապեր և փորձ ձեռք կբերես

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔ

1

Դեպարտամենտներ

Ուսանողական խորհրդի կազմում գործում են հետևյալ դեպարտամենտները.

- Մշակույթի դեպարտամենտ
- Սպորտի դեպարտամենտ
- Ինտելեկտուալ զարգացման դեպարտամենտ
- Բարեգործական դեպարտամենտ
- Հայրենասիրական դեպարտամենտ
- Մեդիա դեպարտամենտ
- Կազմակերպչական դեպարտամենտ

2

Սպորտ և առողջ ապրելակերպ

- սպորտային միջոցառումների, մրցաշարերի և մրցումների կազմակերպում
- Ինստիտուտների և համալսարանների միջև Սպարտակիադայի և Ունիվերսիադայի կազմակերպում և անցկացում

3

Մենթորություն և ադապտացում

- աջակցություն առաջին կուրսեցիներին՝ համալսարանական կյանքին հարմարվելու հարցում
- բարձր կուրսերի ուսանողների ներգրավում՝ որպես մենթորներ
- հանդիպումների և խորհրդատվությունների կազմակերպում՝ ուսանողների կարևոր հարցերին պատասխանելու նպատակով

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Միավորում ենք: Նախաձեռնում ենք: Զարգացնում ենք:

4

Տեղեկացում և ներգրավվածություն

- Ուսանողական խորհրդի սոցիալական էջերում նորությունների, միջոցառումների հայտարարությունների և արդյունքների հրապարակում
- Հարցումների և քվեարկությունների անցկացում
- Ուսանողների ներգրավում համալսարանական ակտիվ կյանքում

5

Միջոցառումներ և նախագծեր

- Տարբեր ուղղություններով միջոցառումների կազմակերպում և նախագծերի իրականացում
- Հանդիպումների կազմակերպում հետաքրքիր և փորձառու բանախոսների մասնակցությամբ
- Ուսանողների համար նախատեսված նախագծերի կազմակերպում
- Ուսանողների նախաձեռնությունների աջակցություն և խրախուսում
- Նոր բան փորձելու և սեփական ներուժն իրացնելու հնարավորությունների ստեղծում

Ուսանողական խորհուրդ - քո՛ ձայնը, քո՛ գաղափարները, քո՛ ապագան: Գործում ենք միասին՝ ստեղծելով վառ ուսանողական կյանք:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Որտեղ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը և ո՞ւմ դիմել ամենահաճախ հանդիպող հարցերի դեպքում

1. Պաշտոնական հղումներ

ՌՀՀ կայք
rau.am

Նորմատիվ փաստաթղթեր
rau.am/file-content/normativ-docs

Ստորաբաժանումների կոնտակտներ
rau.am/contacts

Հետևիր նորություններին Համալսարանի պաշտոնական կայքում և ՌՀՀ սոցիալական էջերում:

Instagram
Facebook
Telegram

2. Օգտակար կոնտակտներ

Ուսումնական գործընթացի կազմակերպման դեպարտամենտ
(+374 12) 26-70-66
doep@rau.am
սենյակ՝ 226, 228, 230

Կարիերայի կենտրոն
(+374 12) 26-00-13
career@rau.am
սենյակ՝ 262

Միջազգային կապերի դեպարտամենտ
(+374 12) 26-00-15
international@rau.am
սենյակ՝ 215

Հաշվապահություն
(+374 12) 26-07-16
սենյակ՝ 205., 206

Ռեկտորի երիտասարդության հարցերով խորհրդական՝
Մարգարյան Հռիփսիմե Արայիկի
hripsime.margaryan@rau.am
սենյակ՝ 324

Ռեկտորի կազմակերպչական հարցերով խորհրդական՝
Մելիքսեթյան Մարթա Էդուարդի
marta.meliksetyan@rau.am
սենյակ՝ 326

Պահպանիր այս էջը. այն մեկ անգամ չէ, որ օգտակար կլինի: